ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2021/47

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 մայիսի 2021 թ. N 47

ԳՈՐԻՍԻ ՊՐՈՖ. Խ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Գորիսի պրոֆ. Խ.Երիցյանի անվան պետակա գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Առաքելյան փ. 32
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 24.12.20թ.-ի Հանձնաժողովի նիստում քննարկեց Գորիսի պրոֆ. Խ.Երիցյանի անվան գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ ՄՈւՀ, քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	28 փետրվարի 2018
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝	12 հուլիսի 2018
փորձագիտական այցի իրականացում՝	13-15 հունվարի 2020
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	26 փետրվարի 2020
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը

կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 5-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»**, գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Առկա են խնդիրներ որակավորումների արժանահավատ շնորվման տեսանկյունից, սակայն առաջխաղացման միտումներ և օրինակներ առկա են:***

Ըստ պետական կրթական չափորոշիչների կազմված ՄԿԾ-երն իրենց կառուցվածքով և բովանդակությամբ հնարավորություն տալիս են որակավորման արժանահավատ շնորհման համար, սակայն ուսումնական միջավայրը, նյութատեխնիկական հագեցվածությունը, մեթոդական բազան չեն նպաստում դրան:

Թույլ է ներքին և արտաքին շահակիցների հետ փոխադարձ փոխշահավետ համագործակցությունը կրթական բոլոր գործընթացներում: ՄԿԾ-ները հիմնականում տեղայնացված չեն տվյալ տարածաշրջանի համար, ինչպես նաև առկա չէ աշխատաշուկայի պահանջների վերլուծություն, որը հիմք կարող էր ընդունվել ՄԿԾ-ները մշակելիս և բարելավելիս: ՄԿԾ-ների ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականությունը հստակ չէ, որը կարող է խոչընդոտել յուրաքանչյուր մասնագիտացման համար անհրաժեշտ վերջնարդյունքների ձեռքբերումը, մինչդեռ այն նաև կնպաստի ուսանողականետրոն ուսուցմանը: ՄԿԾ-ների արդյունավետության և առկա խնդիրների վերհանման նպատակով գնահատում համակարգային կերպով չի իրականացվել, հետադարձ կապի մեխանիզմները դեռևս ձևավորման փուլում են:

ՄԿԾ-ների իրականացման համար առկա է համապատասխան դասախոսական կազմ, սակայն ՊԴ կազմի բարձր միջին տարիքը, ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների բացակայությունը վտանգում են ՊԴ կազմի կայունությանը և ռիսկեր է պարունակում որակավորման արժանահավատ շնորհման համար: ՊԴ կազմը երիտասարդացման կարիք ունի:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Քոլեջն ունի Ռազմավարական ծրագիր, սակայն այն չի արտացոլում հաստատության հիմնական հավակնությունները: Հաստատության կարճաժամկետ պլանավորումները հիմնականում չեն բխեցվում ռազմավարական ծրագրից, իսկ միջնաժամկետ պլանավորում քոլեջում առկա չէ:

Ուսանողները թեև ընդգրկված են ուսանողական և կառավարման խորհուրդներում, սակայն նրանց գերակշիռ մասը տեղեկացված չէ կառավարման մարմինների առկայության մասին, և չկա համապատասխան ներգրավվածություն:

Ռազմավարական կառավարման բնագավառում գնահատման առանցքային ցուցանիշների և արդյունավետության ցուցիչների վրա հիմնվելու ուղղությամբ որոշակի քայլեր արված են, սակայն այն դեռևս չի կրում կանոնակարգված բնույթ: Բացակայում են տվյալների հավաքագրման կայուն մեխանիզմները, գործընթացների մշտադիտարկում գրեթե չի իրականացվում:

2017թ-ին ստեղծված որակի ապահովման կենտրոնն այս պահին չի գործում: Քոլեջի կառավարման համակարգի կողմից պատշաճ ուշադրություն չի հատկացվում այս կենտրոնին, չեն մշակվել որակի ապահովման ընթացակարգեր և մեխանիզմներ, քոլեջում ոչ մի գործընթաց չի իրականացվում որակի ապահովման «պլանավորում–իրականացում–գնահատում-բարելավում» շրջափուլով: Իրականացվող գործընթացները հիմնականում պլանավորման փուլում են, որը չի իրականացվում՝ ըստ գերակա ուղղությունների: Հաստատությունում առկա չեն նաև չափելի ցուցիչներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ գնահատել իրականացված գործընթացների արդյունավետությունը:

3.. *Միջազգայնացումն ու հետազոտական/ ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.*

Քոլեջը չունի հետազոտական/ ստեղծագործական ոլորտում հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարություն: ՊԴ կազմը և ուսանողները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, չկան վերլուծական և հետազոտական հմտությունների ձևավորմանն ուղղված գործընթացներ, ինչպես նաև հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Քոլեջում աշխատանքներ չեն տարվում միջազգայնացման ուղղությամբ, չկան արտաքին կապերի խրախուսման մեխանիզմներ:

Քոլեջում դեռևս չի ձևավորվել արտաքին կապերի իրականացումն ապահովող և կանոնակարգող ենթակառուցվածք, ինչը վտանգում է հաստատության նախաձեռնած գործընթացների շարունակականությունը: Չի իրականացվել առկա սակավաթիվ տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքների գնահատում և վերլուծություն, որը կնպաստեր հետագա զարգացմանն ու առաջխաղացմանը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, միաժամանակ հիմքեր ստեղծված են բարելավումների համար:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և **իրականացման պարագայում** բարելավումները կբերեն որակական փոփոխությունների Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Գորիսի պրոֆ. Խ.Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով.
   - **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում», «Ենթակառուցվածք և ռեսուրսներ», «Արտաքին կապեր և միջազգայանացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,
   - քոլեջի կողմից իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման առաջընթացի քանակական ցուցիչներ ունենալու պահանջը,

- քոլեջի կողմից իրականացվող գործընթացների իրականացման և գնահատման համար նախանշված ժամկետների և նախատեսվող ֆինանսական միջոցների չափի հստակեցման անհրաժեշտությունը,
- որոշումների կայացման գործընթացում ուսանողների և դասախոսների մասնակցությունը ակտիվացնելու անհրաժեշտությունը,
- կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմների մշակման անհրաժեշտությանը:

3. Հատուկ ուշադրություն դարձնել.

- վարչական և ուսումնաօժանդակ կազմի հասանելիությանը ուսանողներին և ուսանողականետրոն մոտեցմանը,
- նախապես հավաքագրված և վերլուծված տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը,
- ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի ապահովմանը,
- որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների տրամադրմանը,
- որակի ներքին ապահովման համակարգի կայուն զարգացման մեխանիզմների ստեղծմանն ու իրականացմանը,
- քոլեջի բոլոր գործընթացներում որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
- արտաքին կապերի զարգացմանը և գործատուների հետ համատեղ ռազմավարության մշակմանն ու իրագործմանը,
- ՄԿԾ-ների համապատասխանեցմանը տարածարջանի և աշխատաշուկայի կարիքներին,
- ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2020 թ., դեկտեմբերի 24

ք.Երևան